# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2015 թվականի N 82-Ա

### "ԼԱՎ ԸՆԿԵՐ" ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՊԱՆ-ՍՅՈՒՆԻՔ N5 ԵՐԹՈՒՂՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, "Ավտոմոբիլային տրանսպորտի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 12-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի "և" կետի, 21-րդ հոդվածի 4-րդ մասի "ա" կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի "Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին" ՆՀ-728 հրամանագրի 1□14-րդ կետի "ա" ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N762 որոշմամբ հաստատված կարգի 62-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի և Սյունիքի մարզերի տրանսպորտային տեսչության 2015 թվականի հունիսի 11-ի N 023364 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի ներմարզային մրցութային հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 11-ի եզրակացությունը, որոշում եմ՝

1. Փոխադրողին ներկայացվող օրենսդրությամբ սահմանված պահանջները և պայմանագրային պարտականությունները չկատարելու համար "Լավ Ընկեր" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը զրկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան-Սյունիք N5 երթուղու սպասարկման իրավունքից:
2. Հաշվի առնելով սույն որոշման 1-ին կետում նշված երթուղու սպասարկման անհրաժեշտությունը, մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը, երթուղու սպասարկումը ժամանակավորապես կազմակերպել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N762 որոշմամբ հաստատված կարգի 62-րդ կետի պահանջներին համապատասխան:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. հունիսի 15
ք. Կապան